


2133

241  
P-82

1989







ԻՆՁ ՈՐ ՄԱՐԴ ՍԵՐՄԷ,

ԱՅՆ ԷԼ ԿՀՆՁԷ.

241

Ր-82



Գրդ. 2. 7—8.

Что поѣдешь, то и пожнешь.

Посл. къ Галат. 6,7—8.

(проповѣдь)

Изданіе пастора О. Торосьянцъ, Баку.

БАКУ,

Типографія А. Н. Тараева и Л. Д. Мирзаянцъ.  
1909

2000,



2010



Գաղ. 2, 7—8. Մի խաբուիք, Աստուած չի ծաղրուիլ։ Որովհետեւ Ինչ որ մարդ սերմէ, այն էլ կ'հնձէ. Իր մարմնի մէջ սերմողը մարմնիցն ապականութիւն կ'հնձէ, և Հոգու մէջ սերմողը Հոգուցն յաւիտեանական կեանք կ'հնձէ։

«Ինչ որ մարդ սերմէ, այն էլ կ'հնձէ». սա բնութեան մէջ մի հաստատ և անխախտելի օրէնք է. Երբեք չի կարելի ցորեն ցանել և գարի հնձել, կամ գարի ցանել և ցորեն հնձել: Այդ նոյն օրէնքը իշխում է նոյնպէս հոգեւոր կեանքի մէջ. մեր ամբողջ կեանքն երկրիս վրա նւժման է մի սերմուող դաշտի, որը պիտի հասունանայ յաւիտենականութեան համար և հնձուի մահուան ժամանակ: Ինչպէս որ երկրաւոր կեանքդ է եղել, այնպէս էլ անպատճառ կ'լինի նրա յաւիտենական վարձը. սորա համար էլ առաքեալը ասում է. «Իր մարմնի մէջ սերմողը մարմնիցն ապականութիւն կ'հնձէ և Հոգու մէջ սերմողը Հոգուցն յաւիտենական կեանք կ'հնձէ»:

Սովորապէս երկրազարծը մինչև սերմը հողին յանձնելը՝ հողը լաւ մշակում և պարարտացնում է և ապա ընտիր սերմը ցանում, նա յանձն է առնում ամեն ներդաւթիւն և աշխատանք,

msb 2350



որպէս զի արտը լաւ պտուղ տայ և իր աշխատանքը տասնապատիկ կամ հարիւրապատիկ վարձատրուի: Այդպիսի մեծ ինսամքի և հոգացողութեան է արժանանում մի արտ, որ աշնանը կամ գարնանը սերմվում է ու ամառը հնձվում և միւս տարի նորից նոր աշխատանք և նոր հոգացողութիւն պահանջում. ապա ուրեմն, որքան աւել պէտք է հոգալ մեր ժամանակաւոր կեանքի արտի համար, որի պտուղները պիտի ստանանք և վայելենք յաւիտեան: Շատերը մեզնից այնպիսի կեանք են վարում ու իրանց ժամանակաւոր բարեկեցութեան համար այնպիսի զգուշի միջոցների դիմում, կարծես թէ միևնոյն բանն լինի. սրտութիւնը և ճշմարտութիւնը, մեղքն ու արգարութիւնը, չարն ու բարին: Ոմանց կեանքի նշանաբանը՝ ուտել, խումել և գուարճանալն է: Նոյն հասկացողութիւնը ունէին նոյնպէս գաղատացիներից ոմանք կեանքի մասին, սորա համար էլ առաքեալը զգուշացնում է նրանց ասելով՝ «Մի խաբուիք, Աստուած չի ծաղրուի»:

Գուցէ մեր մէջ չ'գտնուին այնպիսիները, որոնք ուրանային Գաղատացիների նման դատաստանը և յաւիտեանականութիւնը, բայց և այնպէս մեզնից շատերը իրանց անհոգութեամբ և անտարբերութեամբ կեանքի ընթացքում ուրանում են այդ ամենը. նրանք այնպէս են վարվում իրանց կենաց ժամանակի հետ, այնպէս գործ դնում իրանց ընդունակութիւններն ու ուժերը, որ կարծես թէ այդ սերմելուն երբէք հունձ չ'պիտի հետևի. կարծես չ'կայ մի ամենատես աչք, որ գիտում է մեր ամեն գործերը և մինչև մեր սրտերի խորքերը թափանցում. կարծես չ'կայ մի դատաւոր, որի ատենանի առջև մենք ամենքս մի անգամ պիտի կանգնենք:

Աշխարհը սովորապէս գովում է այն մարդկանց, որոնք օգտվում են ամեն մի հանգամանքից՝ առանց միջոցների մէջ խարութիւն գնելու, իրանց համար հարստութիւն ու գիրք են ձեռք բերում և իրանց մարմնի ու աչքի ցանկութիւններին բաւականութիւն տալիս:

Բայց միթէ սա պիտի լինի, քրիստոնեայ ընթերցող, նոյնպէս քո կշռի չափը և քո կեանքիդ նպատակը: Ոչ, երբէք: Առաքեալը ասում է. «Մի խաբուիք, Աստուած չի ծաղրուի, որովհետեւ ինչ որ մարդս սերմէ, այն էլ կը հնձէ. իր մարմնի մէջ սերմողն, մարմնիցն ապականութիւն կ'հնձէ». ուրիշ կերպ չի կարող լինել, ինչպէս կեանքդ է եղել, այնպէս էլ անպատճառ հատուցումը պիտի լինի. ուստի զգաստացիր քանի դեռ քեզ համար չի վերջացել սերմելու ժամանակը: Լսիր Տիրոջ ձայնը, որը քեզ իւր խօսքի միջոցով ապաշխարութեան է հրաւիրում: Գուցէ դու հանգստացնում ես քեզ ասելով՝ թէ ես հոգու մէջ եմ սերմում եմ. աղօթք եմ անում, Աստուծոյ խօսքը կարդում, եկեղեցի գնում, հաղորդութեան սեղանին մօտենում: Բայց լաւ գիտցիր, եթէ քո աստուածապաշտութիւնդ միայն որոշ ժամանակների և որոշ հանգամանքների հետ է կապուած, եթէ դու որոշ դէպքերում ըստ կարեւորութեան քո բարեպաշտութեան շապիկը հանում կամ հագնում ես, նայելով՝ որն է քեզ աւելի ձեռնառու, այդ դէպքում ոչ քո աղօթքը, ոչ քո Սուրբ Գիրք կարգալը, ոչ քո եկեղեցի գնալը և ոչ էլ քո հաղորդութեան սեղանին մօտենալը Աստուծոյ առաջ մի որևէ արժէք չի ունենայ և քո այդ ըստ երևոյթին լաւ սերմերից մի սարսափելի հունձ կը տառաջանայ քեզ համար, «որովհետեւ Աստուած չի ծաղրուի»: Այդ արտաքին բարեպաշտութեամբդ դու կարող ես ինքդ քեզ խաբել և հանգստացնել, բայց Աստուծուն երբէք. հէնց սորա համար էլ առաքեալը զգուշացնում է ասելով՝ «մի խաբուիք», այսինքն մի կարծէք, որ Աստուած կեղծ բարեպաշտութիւնը ճշմարտի տեղ կընդունէ, որ նա արտաքին գեղեցիկ երևոյթի տակ չի նկատիլ ներքին ծածուկ, զգուշի նպատակները և շարժառիթները: Մեր ամեն մի խօսքը, գործը՝ այս ամեն մի միտքն էլ այնպիսի սերմեր են, որոնցից մենք յաւիտեանականութեան մէջ անպատճառ պիտի հնձենք: Մեր կեանքի ամեն մի ժամն ու րոպէն սերմելու ժամանակ է մեզ համար և



մենք գիտակցաբար թէ անգիտակցաբար ամեն մի վայր-  
կեան սերմում ենք կամ մարմնի մէջ, որպէսզի մարմնից  
ապականութիւն հնձնենք, կամ էլ Հոգոյ մէջ, որպէսզի  
Հոգուց յաւիտենական կեանք հնձնենք. մենք չխաբուինք,  
Աստուած չի ծաղրուիլ երբէք. չկարծենք բնաւ, որ մենք  
որո՞ւմ ցանկելով ցորեն կ'հնձենք: Եթէ մենք միշտ այդ ի  
նկատի ունենայինք մեծ զգուշութիւն գործ կղնէինք  
մեր կեանքի, գործերի, խօսքերի և մտքերի մէջ: Եթէ  
մենք մտածէինք թէ մեր կեանքի ամեն մի օրուայ կամ  
ժամուայ ընթացքում ինչքան բարիք կամ չարիք կարող ենք  
պատրաստել մեր յաւիտենական կեանքի համար, անկաս-  
կած մենք անտարբերութեամբ չէինք վատնել մեր կեան-  
քի մինչև անգամ մի ըոպէն էլ:

Յաւալին սա է, որ մարդս ոչ միայն ինքն իր հա-  
մար է լաւ կամ վատ հնձի պատճառ դառնում, այլև ու-  
րիշների համար էլ: Ամեն մարդ ունի իր շրջանը, ուր  
նա գործում է, որի հետ նա միշտ շփւում է և այդպիսով  
ամեն մէկը իր շրջանի համար իր կեանքով ու գործով  
լաւ կամ վատ օրինակ դառնում, նրա օրհնութեան կամ  
էլ նրա դաշմակցութեան պատճառ լինում: Առաւել մեծ  
նշանակութիւն է ունենում ծնողի կեանքը և օրինակը իր  
զաւակների համար: Ամեն մի խօսք, որ մեր զաւակները  
լսում են մեզնից, ամեն մի գործ, որ նրանք տեսնում  
են մեզ գործելիս, շատ շուտով սովորում են և նոյնպէս ի-  
րանք էլ գործ դնում և այդպիսով մենք նրանց քնքոյշ  
սրտերի մէջ սերմի հատիկներ ենք ձգում, որոնցից ժա-  
մանակի ընթացքում կամ յաւիտենական կեանքի կամ էլ  
յաւիտենական մահուան հունձ պիտի հասունանայ նրանց  
համար:

Շատ ծնողներ դժգոհ իրանց զաւակների վարք ու  
բարքից ժամանակի հոգին են մեղադրում, բայց մոռա-  
նում են, որ հէնց իրանք են եղել զաւակների այդ տեսակ  
կեանքի ու վարքի պատճառը և օրինակը: Շատ զաւակ-  
ներ տեսնելով իրանց ծնողների կեղծ աստուածապաշտու-

թիւնը, տեսնելով թէ ինչպէս նրանք բարեպաշտ և առա-  
քինի են ձեռնում ուրիշների առաջ և բոլորովին այլ պատ-  
կեր են ստանում իրանց տանը և ընտանիքի մէջ. տես-  
նելով թէ ինչպէս նրանք ինչ որ աղօթքի ժամանակ խոս-  
տանում են, կեանքի մէջ ուրանում ու զանց են առ-  
նում. այն ինչ որ նրանք ուրիշների կեանքի և գործերի  
մէջ դատապարտում են, հէնց իրանք են առանց խղճա-  
հարուելու գործում, մի այդպիսի ծնողի գաւակը լաւ  
հասկանում է իր ծնողի կեղծ բարեպաշտութիւնը և ինքն  
հօրիցն էլ մի քայլ առաջ է գնում, դառնալով պարզ ան-  
հաւատ և կատարվում է Աստուծոյ խօսքը որ ասում է,  
«հայրերը ազոխ են կերել և որդիներանց աստամները սա-  
ռել են»: Իսկ սորա հակառակ եթէ մի ասն մէջ ճշմա-  
րիտ բարեպաշտութիւն լինի, եթէ սէրը, քաղցրութիւնը,  
համբերութիւնը և խոնարհութիւնը իշխէ, մի այդպիսի  
ընտանիքի զաւակներն ևս աչք բացելով և քրիստոնէա-  
կան առաքինութիւնների մէջ մեծանալով միևնոյն բարի  
սերմի հատիկները կրնդունեն իրանց սրտի մէջ, որոնք  
նրանցում կ'ըմբռնան և յաւիտենական հնձի համար կը  
հասունանան: Բայց որտեղից կարող է մի մանուկ այդ  
բարի սերմերը իր սրտի մէջ ընդունել, քանի որ ծնող-  
ներից աղօթքի, օրհնութեան և փառաբանութեան փոխա-  
րէն անէ՞ծք ու հայհոյանք է լսում, սիրոյ և քաղցրու-  
թեան փոխարէն միայն թշնամութիւն, ատելութիւն և նա-  
խանձ, համբերութեան փոխարէն՝ բարկութիւն, խոնարհու-  
թեան փոխարէն անբարատաւանութիւն, աստուածապաշտու-  
թեան փոխարէն մամոնայապաշտութիւն և վերջապէս  
բաւականութեան փոխարէն ազահութիւն: Այդ դէպքում  
ծնողները ոչ միայն իրանք իրանց համար են դատապար-  
դութեան հունձ պատրաստում, այլ անգիտակցաբար իրանց  
փոքրիկ զաւակների համար ևս, որովհետեւ «Աստուած  
ծաղր չի լինիլ», ինչ որ մարդս սերմէ, այն էլ կ'հնձէ:

Մեր կեանքի մէջ շատ ժամանակ մեղքին հետևում է  
իր պատիժը, շատ անգամ այնքան պարզ և շօշափելի կերպով,



որ ամեն մէկը կարող է ասել՝ սա այս ինչ մեղքի հետեւանքն է, նա այն ինչ յանցանքի։ Բայց եթէ շատ անգամ էլ մեզ համար շատ մեղքերի հետեւանքը և պատիժը ծածկուած էլ մնալու լինի, սակայն և այնպէս յաւիտենականութեան մէջ ամենքի համար սլարզ և յայտնի պիտի լինի, որովհետեւ Աստուած չի ծաղրուիր։ Նա թոյլ չի տայ, որ մարդը ամեն քայլում ոտնակոխ անէ իր Սուրբ պատուէրները և անպատիժ մնայ։

Շատերը հանգստացնում են իրանց, ասելով՝ Աստուած ողորմած է, նա այնքան էլ խիստ չի դատիր։ Հէնց այդ սխալ գաղափարը Աստուծոյ ողորմութեան մասին ուզում է հերքել առաքեալը ասելով՝ «Մի խաբուիք։ Աստուած չի ծաղրուիր։ Ինչ որ մարդ սերմէ, այն էլ կը հնձէ։ Իր մարմնի մէջ սերմողը մարմնիցն ապականութիւն կ'հնձէ և Հոգու մէջ սերմողը, Հոգուցն յաւիտենական կեանք կ'հնձէ»։ Սա հաստատ է և ճշմարիտ. այդ խօսքերից մի կէտ անգամ չէ կարելի փոխել։ Եւ քանի որ այդպէս է, ուստի մեզ չ'պիտի դադար և հանգստութիւն տայ հետեւեալ հարցը, ինչ հունձ է սպասում մեզ, ինչ ենք սերմել մինչև այսօր, ինչ ենք սերմում ամեն օր նորից։

Կարող ես, սիրելի ընթերցող, ճշմարտապէս ասել, որ քո կեանքդ սկզբից մինչև այժմ միմիայն Հոգոյ մէջ սերմելուն է եղել, Յիսուս Քրիստոսում և նրա կեանքի և խօսքի համեմատ։ Երանի թէ այդ հարցը այսօր և միշտ ծանրանալով մեր սրտերի վրայ և մեզ հանգստութիւն չ'տալով, որպէսզի ճշմարիտ ապաշխարութեամբ դիմէինք նրան, որը միայն կարող է մեր տարակուսանքը հնձի մասին փարտաւել և երկիւղը երջանիկ յուսոյ փոխել, որովհետեւ կայ մի Ազատիչ և Փրկիչ մեզքից և դատապարտութիւնից։ Կայ Մէկը, որը դժուարի համար հասունացած մեղաւորին կարող է արդարացնել և երկնքի ժառանգը դարձնել։ Այդ միակ Ազատիչը և Փրկիչը Յիսուս Քրիստոսն է։ «Եւ էլ ուրիշ ոչ մէկով փրկութիւն չկայ, որովհետեւ ուրիշ անուն էլ չկայ երկնքի ներքեւ մարդկանց

տրուած, որով կարելի լինի մեզ փրկուել»։ Յիսուսն է միայն, որը կարող է ազատել մարդուն մեղաց ծառայութիւնից և նրան հետեւող պատժից։ Նա է միայն, որ անպտուղ դաշտը կարող է պարարտացնել և պտղատու դարձնել։ Նա է միայն, որ կարող է պարգեւել այն՝ ինչ որ հոգու մէջ սերմելու համար հարկաւոր է։ Նա է միայն որ կարող է մեր մէջ վերջ դնել հին կեանքին և նրա բոլոր ապերժանիկ հետեւանքներին և մի նոր կեանք առաջ բերել իր երջանիկ հետեւանքներով։ Այդպէս է վարվում նա ամեն մի մեղաւորի հետ, որ սրտանց ապաշխարում է և ճշմարտապէս զէպի նրան դառնում։ Հէնց այդ պատճառով էլ նա իբրեւ ազնիւ ցորենի սերմը երկրիս վրա է ընկել և մեռել, որ իր մահուամբ և յարութեամբ նոր սերմ և նոր հունձ առաջ բերէ ամբողջ մեղաւոր մարդկութեան համար։ Ոչ մի որոշում, ոչ մի ջանք, ոչ մի գործ մեր սեպհական զօրութեամբ և բանականութեամբ չէ կարող մինչև անգամ չարութեան ամենափոքրիկ սերմն մեր մէջ ոչնչացնել կամ մի որեւէ բարի սերմ առաջ բերել յաւիտենական կեանքի հնձի համար, միմիայն Յիսուսն է որ կարող է հեռացնել և փչացնել դուրս ձգելու արժանին և սերմել ու աճեցնել այն, ինչ որ հարկաւոր է հնձի համար։ Հաւատոյ ձեռներով ամուր բռնիր այդ Յիսուսին, նրանից խնդրիր և ստացիր ամենը որ միշտ նրա մէջն է և դու կարող ես Հոգոյ մէջ սերմել և Հոգուցն յաւիտենական կեանք ստանալ։ Յիսուս ասում է. «Նա որ ինձանում է մնում և ես նորանում, նա շատ պտուղ է բերում, որովհետեւ առանց ինձ չէք կարող ոչինչ անել»։

Ով որ Յիսուս Քրիստոսի հետ ճշմարիտ յարակցութեան մէջ է և նրանում է ապրում, նա առատ պտուղներ է տալիս. իսկ եթէ քեզանում, սիրելի ընթերցող, պտուղ չէ երևում, իզուր բեզ մի խաբիլ քրիստոնէական երևոյթով և շրթունքի աստուծապաշտութեամբ։ «Հոգոյ պտուղները, ասում է առաքեալը գաղատացիներին. սէր, ուրախութիւն, երկայնամտութիւն, քաղցրութիւն, հաւատ, հեղութիւն և



ժողովակալութիւն է»։ Այդպիսի պատուիրներով զարդարած կեանքը օրհնութիւն է իր հետ որ և է առնչութիւն ունեցողների համար, բայց առաւելապէս մարդու իրան համար։ Առաքելը ասում է՝, «Հոգոյ պատուը ուրախութիւն է»։ Հոգոյ մէջ սերմողը ուրախութիւն է ունենում տեսնելով՝ որ իր կեանքը դատարկ և աննպատակ չէ անցնում, որ Աստուած իրանով փառաւորվում է և սիրով ու քաղցրութեամբ է նայում իրան։

Մնացիր, սիրելի ընթերցող, Յիսուս Քրիստոսում և դու արդէն երկրիս վրայ անսահման ուրախութիւն կ'ունենաս. իսկ եթէ Յիսուսում չես մնալ, Հոգոյ պատուների փոխարէն մարմնոյ պատուներ կ'ունենաս, այսինքն՝ մահ և դատապարտութիւն. կ'զայ ժամանակ, երբ ամեն բան երկրիս վրա կ'անցնի և փոշի կ'դառնայ և այն բոլոր բարիքները և հրապուրիչ բաները, որոնք քեզ այժմ այնպէս գրաւում և յափշտակում են, ամենը յաւիտականութեան դիմաց իբրև ոչինչ կ'երևան և դու ցաւելով կ'տեսնես, որ քո մարմնիդ վրայ սերմածը, մարմնիդ հետ միասին անցաւ, գնաց ու անհետացաւ, դու մնացիր խեղճ, թշուառ, ողորմելի և դատապարտութեան արժանի կանգնած Աստուծոյ անեղ ատեանի առաջ։

Աստուած պահէ մեզ այդպիսի սարսափելի վիճակից, նա ինքն տայ մեզ կարողութիւն և զօրութիւն իր կամաց պէս ապրելու, որպէս զի յաւիտենականութեան մէջ յաւիտենական կեանք և երջանկութիւն հնձենք։

|                         |                           |
|-------------------------|---------------------------|
| Սովորեցրու ինձ ջանալ    | Ա՛խ թէ ամենայն ժամ        |
| Քո սուրբ կամքը կատարել, | Մարդկանց հետ ապրեմ սիրով, |
| Այնպէս գործել, խօսալ,   | Թըշնամի, բարեկամ          |
| Որ առջևդ կարեմ կանգնել. | Միշտ անխտիր սիրով,        |
| Երբ ցաւեր ինձ վրայ գան  | Թէ տաս ինձ կեանք երկար,   |
| Եւ ինձ ցած տապալեն,     | Եւ մագերս ճերմակին.       |
| Եղիր դու իմ պաշտպան,    | Տէր, թող մեզք և աշխարհ    |
| Որ ես կանգնեմ նորեն։    | Ձը խոցեն իմ հոգին։ Ամէն։  |





14-13


2133



0000









|| Aprm.  
|| 4-13/a